Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2024-2025 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
11-12 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Ո՞ր գոտում է մակընթացային էներգետիկայի ամենամեծ ներուժը**
   1. հասարակածային 2. արևադարձային 3. բարեխառն 4. բևեռային
2. **Գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսով առաջատար է՝**
   1. Ավստրալիա 2. Չինաստան 3. Բրազիլիա 4. ՀԱՀ
3. **Օդի աղտոտվածությունից նշված երկրներից տարեկան ամենամեծ թվով մահերը գրանցվում են՝**
   1. Չինաստան 2. ՌԴ 3. ԱՄՆ 4. Ինդոնեզիա
4. **Միջնադարյան Եվրոպայում ծովագնացության համար հատուկ ստեղծված քարտեզները կոչվել են՝**
   1. աբիսսալներ 2. պորտոլաններ 3. ռիֆտեր 4. մաքվիսներ
5. **Երկաթուղիների երկարությամբ աշխարհում առաջատար է՝**
   1. Հնդկաստան 2. ԱՄՆ 3. Չինաստան 4. ՌԴ
6. **Նշված արտադրություններից էներգատար է՝**
   1. ալյումինաձուլությունը 2. պղնձաձուլությունը
   3. դեղագործությունը 4. ռադիոէլեկտրոնային մեքենաշինությունը
7. **Տարաբնակեցման համակարգերին նվիրված նշանավոր տեսության հեղինակ է**
   1. Վեբերը 2. Վեգեները 3. Կրիստալլերը 4. Ֆոն Թյունենը
8. **Նշված նավահանգիստներից որո՞նց միջև ծովային փոխադրումն է կոչվում մեծ կաբոտաժ**
   1. Սոչի-Նովոռոսիյսկ 2. Ճենովա-Նեապոլ
   3. Մումբայ-Չենայ 4. Բուրգաս-Վառնա
9. **Բողոքականների թվով աշխարհի առաջատար երկիրն է՝**
   1. Գերմանիա 2. Մեծ Բրիտանիա 3. ԱՄՆ 4. Կանադա
10. **ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատմամշակութային ժառանգության ցանկում ամենաշատ օբյեկտներով ներկայացված է՝**
   1. Ասիա 2. Աֆրիկա 3. Եվրոպա 4. Հարավային Ամերիկա
11. **Աշխարհում ջրօգտագործման գլխավոր ոլորտն է՝**
   1. կոմունալ-կենցաղայինը 2. արդյունաբերությունը
   3. էներգետիկան 4. գյուղատնտեսությունը
12. **ՀՀ արդյունաբերական ՀՆԱ կառուցվածքում առաջատար է՝**
   1. Սննդի արդյունաբերությունը 2. Թեթև արդյունաբերությունը
   3. Մեքենաշինությունը 4. Մետաղաձուլությունը
13. **ՀՀ լեռնանցքներից ՀՀ մարզերի միջև անցում ապահովող չէ՝**
   1. Վարդենյաց 2. Թուխմանուկի 3. Որոտանի 4. Սիսիանի
14. **Նշված հապավումներից ո՞ր միջազգային տնտեսական միության անվանում չէ**
   1. ԱՍԵԱՆ 2. ԵԱՏՄ 3. ԱՀԿ 4. ՆԱԵԿ

15. **Տվյալ հիդրոգրաֆներից ո՞րն է համապատասխանում X գետավազանին**



1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Ճանապարհորդը, գտնվելով հասարակածի վրա, դիտարկեց, որ արևի հորիզոնական բարձրությունը տվյալ օրվա կեսօրին 88^0 է, մինչդեռ օրեր առաջ 85^0 էր: Նվազագույնը քանի օրից ճանապարհորդը կեսօրին հասարակածում արևը կտեսնի 90^0 անկյան տակ:

17. Ա երկրում ռեսուրսապահովվածությունը նավթով 40տարի է, Բ երկրում՝ 60տարի: Ա երկրում տարեկան արդյունահանվում է 6մլն տ նավթ: Որքա՞ն տոննա նավթ է արդյունահանվում Բ երկրում, եթե նրանց նավթի ընդհանուր պաշարները նույնն են:

18. Երկու գյուղերի միջև անց է կացվել բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծ, որից 2կմ հատվածը անցնում է գյուղատնտեսական նշանակության հողերի վրայով: Այդ կտորի երկայնքով 15մ շառավղով հողերը դուրս են բերվել գյուղատնտեսական կիրառումից: Որքա՞ն հեկտար գյուղատնտեսական նշանակության հող է դադարել շահագործվել:

19. Ա երկրում բնակչության թիվը 2023թ.-ին 2022թ.-ի համեմատ ավելացել է 50հզ մարդով, ընդ որում բնակչության թիվը 2022թ.-ի վերջին եղել է 15մլն մարդ: 2023թ.-ին միգրացիայի ծավալը 60հզ մարդ էր, իսկ ներգաղթը՝ 40հզ մարդ: Որքա՞ն է եղել այդ նույն ժամանակահատվածում բնակչության բնական աճը՝ արտահայտած պրոմիլներով:

20. Արդյունաբերական ձեռնարկությունը ստացել է ածխաթթու գազի արտանետման տարեկան 100տ քվոտա: Օրական գործարանն արտանետում է 760կգ ածխաթթու գազ և տարվա ընթացքում աշխատում է 250 օր: Սեփական ածխածնային հետքը չեզոքացնելու նպատակով տարեկան քանի հեկտար անտառատնկում պետք է կատարի տվյալ ձեռնարկությունը, եթե մեկ հա անտառը տարեկան չեզոքացնում է 90տ ածխաթթու գազ:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Ասատրյան**